կոտ երկիրը Քրիստոսի 500 թուին. իսկ Վարսենիկի ամարանոցն էր այս Ղրզ—Ղալայ անուանեալն, որոյ համար իսկ պահել է բերդը Դիւլիստան (Վարդարան) և Ղրզ Ղալայ (Աղջկաբերդ) անունները, ինչպէս և քանի այնպիսի անունով տեղեր եւս կան Զամախու կողմերումն, զոր օրինակ՝ Ղրզ—Մէյդան՝ այժմ դիւղ Մալականաց, Ղրզ—Սեւան լեռնահովիտ, Ղրզ Քեօշկի ի մերձակայս Ղրզ—Մէյդանի են։

Եւ ով գիտէ թէ Աղուանից բառերից թարգմանած չեն Պարսիկները։ Այս բերդի երեք կողմունքն եւս մատչելի են. ուստի և պարսպով և բուրջերով ամրացած, միայն ձորի կողմից կարելի է ասել փոքր ինչ ապահով։ Այս ձորիցը, ինչպէս գաղտնի ճանապարհի հետքը ցոյց է տալի, ջուր են հանել բերդի մէջը։ Այս բերդաբլրի դիմացը կանգնած է նրանից աւելի բարձր ու լայն՝ Եղիա մարգարէի սարը, որին պարսիկները «Փետրաքու» անուանեն, որ պարսկերէն նշանակէ թաղի - գահ թաղական, ինչպէս պարսկերէն բառարանի մէջ գրած է՝ «Փաթ —գահ, թաղտ։ Քիւթ թաղ, Մահլայ»։ Եւ այս Փետրաքու բլրի հարաւային ստորոտումն կէս տափարակ և կէս զառի վայր տեղում շինուած է այժմեան Զամախի քաղաքը։ Այս Փեթրաքիւ — բլուրը ունի լաւ քարահանք սպիտակ քարի, որից առատութեամբ ստանում են Զամախեցիք իրենց շէնքերի համար, և այս բլրից են բղխում Զամախուց բոլոր աղբիւրների ջրերը։ Բայց մի զարմանալի բան, որ այսքան բարձրութեան վրայ՝ կտրած քարերի մէջ պարզ երեւում են ջրային կենդանիք քարացած, զոր օրինակ՝ խխունջ, զանազան դիակ են։

Վարսենիկի ամարանոցի բերդի վերայ (Ղրզ—Ղալայ) արեւմտեան կողմում կայ սրբատաշ ջրամբար, նեղ ժամանակի համար պատրաստած։ Այս բերդը ունի միջնաբերդ, որ ժամանակին ապահովէ պահել բնակիչներին։ Այն ձորը, որ բաժանել է Ղրզղալան Փեթրաքիւյից՝ ունի վերի կողմից կամրջատեղ և թումբ, ձորը լճացնելու հարկաւոր դէպքում, թշնամու առաջն առնելու համար։ Ձորի մէջ և ներքեւումն կան առողջարար ջրոց աղբիւրներ, որովք երբեմն զուարճանում են Զամախեցիք զրօսանքի գնալով, մանաւանդ Դարնան ծաղկաւէտ